

նոյնպէս և այս տարի խնդրագիր հանրագրով մ'դիմեց Նորին Բարձր Սրբազնութեան որ իր մեծ միջնորդութիւն ի գործ դնելով, առ որ էն, որպէս զի յարքունուստ ևս պատուանշան մը շնորհուի Պ. Ծերօն Աստուածատրեանի ի վարձատրութիւն իւր լիութի արդեանց և ազգօգուտ ծառայութեանցն:

Այն նուէրներու մասին կ'ըսեմ, որք ցայսօր լի են եկեղեցւոյ գանձատան մէջը իբր յիշատակ, եւ այն ծառայութեանց համար կ'ըսեմ՝ որ մատոյց և որ դեռ կը մատուցանէ իր հոգաբարձութեան ընթացքի մէջը: Ինչպէս դպրոցին կտակուած այն փոքրիկ գումարը, դրամագլուխը, որ հաշիւ 1500 բուրլւոյ կը յանգէր իսկզբան, այլեւայլ շահաբեր միջոցներով հիմայ այնպիսի մի կիրառութեան մէջ է մտած, որ և տարուէ տարի 600—700 բուրլի շահ կը գոյանայ. և անով է՝ որ ահա դպրոցնիս երկա՛ր տարիներէ ի վեր անսայթաք կը տոկայ իր ծախուց առջեւ, և այլն:

Արդ, ամփոփելով խօսքս այս մասին, կ'ուզամ նախ խորին շնորհակալութիւնս յայտնել տեղւոյս ազնիւ հայրենակից համազգեացս, որք ցնահատել կամեցան իրենց դպրոցին ընդ միշտ ծառայող անձին գործքն: Եւ երկրորդ որդիական պարտաւորութեամբ՝ յանուն Ագքիրմանիս Հայոց՝ խորին և երախտապարտ զգայումներս յայտնել Գեր. Տ. Մակարայ Ս. Թեմակալ Առաջնորդի մերոյ, որ հաճեցաւ նորին Սրբազնութիւն ևս իր Հայրական և խորին ուշադրութեամբ ընդունել առ ժամայն իւր որդւոց խնդիրն, և խոստացաւ իր միջնորդութիւնն ի գործ դնել առ այս: Հաճեցէք, ի խրախոյս այլուր անձնուէր ծառայողաց ըն Ազգիս, սոյն երկտողս հիւրընկալել Ձեր պատուական Արարատ հանդիսին մի անկիւնը:

ՄԵԼԻՔՈՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԱՏՐԵԱՆՑ:

ՍԻՆՕԳԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ:

Ի 42 Ապրիլի 1882 ամի. Յովհաննէս քահանայն Թէմուրազեանց Տփլիսեցի յօրէ ձեռնադրութեան իւրոյ ցայսօր ի պատճառս անվայել կոչման իւրում ընթացից և բմբուստ բնաւորութեան եւ վարմանց իւրոց քանիցս ենթարկեալ է ընդ պատժօր, որովք տակաւին ոչ զգատացեալ ի նոյնօրինակ դնացիցն՝ լինի օրինակ եւ առիթ զայնակողութեան եւ այլոց քահանայից:

Առ առաջնորդութեամբ Մակարայ Արքեպիսկոպոսի՝ Առաջնորդի վիճակին վրաստանի նա — Յովհաննէս քահանայն Թէմուրազեանց վասն զոռոգ, անհամեստ, կոռւատէր եւ յափշտակող բնաւորութեան իւրոյ, հրամանաւ Ս. Սինօղի արգելեալ է ի քահանայադորձութենէ և անկեալ ընդ ապաշխարանօր. բայց նորա ոչ անսացեալ տնօրէնութեան Ս. Սինօղի չէ կատարեալ զապաշխարանս իւր:

Բ. Առ առաջնորդութեամբ Գարրիէլ Արքեպիսկոպոսի՝ վասն անհաշտ վարմանց իւրոց ընդ միտքանակիցս իւր եւ խռովայոյդ բնաւորութեանն՝ հրամանաւ Կոնսիստորիալի արդեւալ է ի քահանայադործութենէ վեցամսեայ ժամանակաւ:

Գ. Յօրէ կարգելոյ Յովնաննէս քահանայի յօգնականութիւն Սահառունեանց քահանայի, բաղմամբ յայտարարութիւնք Կոնսիստորիալի եւ զանգատադիրք Սահառունեանց քահանայի բողոքեն զնմանէ ԹԼ՝ նա յափշտակէ զհասոյթս Սահառունեանց քահանայի, բնաւ չկատարէ զօգնականութեանն պարտաւորութիւն եւ վարի միշտ ընդ Սահառունեանց քահանայի խռովութեամբ եւ ամբարշտութեամբ:

Դ. Ի յայտարարութենէ Կոնսիստորիալին Վրաստանի ի 48 փետրվարի 1881 ամի համար 327 երեւի, զի Յովնաննէս քահանայն Թէմուրազեանց կատարեալ է զպատկ Աւագոյ Բեշիշեանց ընդ Հոիփիմեայ Մինտեանց ցուցանելով զնոռս Տփիսեանցի եւ ծախ իւր, մինչդեռ առաջինն ի նոցանէ — Բեշիշեանցն է Շուշեցի եւ ունի անդ կին եւ որդիս:

Ե. Ի յայտարարութենէ նոյն Կոնսիստորիալի ի 6 Մարտի 1884 ամի երեւի, զի Յովնաննէս քահանայն Թէմուրազեանց ըստ վաղեմի խռովարար բնաւորութեան իւրում զանաւարեալ է զժամակոչս ի մէջ եկեղեցւոյ եւ հայհոյէ միշտ զմիաբանակիցս իւր եւ զԱւագ քահանայն եկեղեցւոյ, եւ ի ստուգելն ի նմանէ յԱտենի Կոնսիստորիալին զայնմանէ՝ նա յանդգնութեամբ պատասխանեալ եւ ելեալ է յԱտենէն: Ս. Սինօզն վասն պատգիկ յանցանաց պատուիրեալ է Կոնսիստորիալին Վրաստանի տաւրել զՅովնաննէս քահանայն ի վասն Հաղբաղայ յապաշխարարութիւն. իսկ նա ոչ անտացեալ հրամանի Կոնսիստորիալի, միջոցաւ հաւատարմատարի խնդրեալ է զպատճէն դործոյ իւրոց առ ի բողոքել զՀոգևոր իշխանութենէ:

Վասնորոյ Ս. Սինօզն գտեալ զնա — զՅովնաննէս քահանայն Թէմուրազեանց աղ եւս անուղղելի՝ ըստ հրամանի Վեհափառ Հայրապետի Ազգիս հրամանագրեաց իսպառ յոժել զնա ի կարգէ քահանայութեան ընդ ձեռն Թեմ. Ատենի Վրաստանի սահմանեալն կարգաւ եւ զասել ընդ հարկատու աշխարհականս, զորմէ եւ միջոցաւ Արատ ամապրոյս հրատարակել ի զիտութիւն համայն Հայոց:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄՆ.

Վեհափառ Կաթողիկոսն ամենայն Հայոց տեսանելով որ արեւդաներից ոմանք տգիտութեամբ կամ ամբարտաւանութեամբ՝ առանց ստացած լինելոյ մասնաւոր իշխանութիւն վարդապետութեան համարձակութեանն պաշտօնական գրագրութեանց մէջ փոխանակ Խէչույ ստորագրելոյ՝ վարդապետ ստորագրել, պատուիրեց զգուշացնել, որ եթէ միւսանգամ արեւդաներից մին համարձակութիւն քարձր քան զիւր կոչումն վարդապետ ստորագրել պաշտօնական գրագրութեանց մէջ, անշուշտ կենթարկուի պատասխանատուութեան եւ պատժոյ: